ՀՏԴ : 929:39(=919.81) Վարդանյան

Doi:10.54503/0135-0536-2025.2-310

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայագիտության մեջ ոսկե տառերով է գրված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող, Աբխազիայի հայ գրողների «Սևծովյան այգաբաց» գրական միավորման Պատվավոր անդամ (2012 թ.) Սերգեյ Վարդանյանի անունը, ով ավելի քան կես դար զբաղվել է հայագիտությամբ և հատկապես՝ Համշենի հայերի բանահյուսության և ազգագրության ուսումնասիրությամբ: Ինչպես երեկ՝ իր ողջության օրոք, այնպես էլ այսօր՝ մահից հետո, եթե չասենք անհնար, ապա գոնե դժվար է խոսել համշենագիտության մասին՝ առանց հոլովելու նրա անունը: Արտերկրի գիտական շրջանակներում Ս. Վարդանյանին ճանաչում են հենց որպես համշենագետի, իսկ Հայաստանում, կարելի է ասել, Համշեն և Սերգեյ Վարդանյան անուններն անքակտելիորեն կապված են իրար:



Ս. Վարդանյանը ո՛չ գիտական կոչում ուներ, ո՛չ էլ աստիճան, նրա կոչումը մեկն էր՝ համշենագետ: Այդ բառը, իհարկե, չենք գտնի հայերենի որևէ բառարանում, որովհետև դա բնութագրում է միայն իրեն: Համշենագիտությունը Ս. Վարդանյանի համար պարզապես գիտություն չէր, ոչ էլ զբաղմունք, այլ համոզմունք էր, պայքար և ազգային արժանապատվություն: Նրա գիտությունը կյանքի ընթացք եղավ, որովհետև անձնական կյանքն ու գիտականը միահյուսվել ու առաջ էին շարժվում համընթաց:

Ս. Վարդանյանը ծնվել է 1952 թ. նոյեմբերի 9-ին Երևանում: 1969 թ. ավարտել է Հակոբ Պարոնյանի անվան թիվ 59 դպրոցը, 1974 թ.՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Այնուհետև աշխատանքի է անցել նույն ինստիտուտի հոգեբանության ամբիոնում:

Արժանահիշատակ են «Պիոներ կանչ» (հետագայում՝ «Կանչ») թերթում և «Պիոներ» (հետագայում՝ «Աղբյուր») ամսագրում նրա աշխատած երկուական տարիները, երբ Ս. Վարդանյանը, առանց չափազանցության, հսկայածավալ աշխատանքի միջոցով մատաղ սերնդին կապել է հայրենի բառ ու բանին՝ ժողովրդական բանահյուսությանը: Այդ կապի արդյունքը շատ չի ուշացել: 1981 թ. լույս է տեսել «Հրեղեն ձին» ժողովածուն, որի նյութը, Ս. Վարդանյանի կոչով, Հայաստանի, Վրաստանի, Աբխազիայի, Ադրբեջանի, Արցախի, Նա-

խիջևանի, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտներն էին հավաքել և ուղարկել իրենց հայրենի բարբառներով: Հավաքված նյութի մյուս մասը 2003 թ. հրատարակվել է «Թագավորի երազները» ժողովածուում: Այդ երկու ժողովածուները, իրավամբ, անզուգորդելի և ցօրս իրենց հաղթարշավը շարունակող աշխատանքներ են: Հետագայում դրանցից ընտրված արձակ նմուշները «Փրկված հեքիաթներ» վերնագրով Երևանում լույս են տեսել անգլերեն (“The salvaged tales”, 2007) *և երկու անգամ՝ գերմաներեն* (“Gerettete Märchen”, 2009, “Vor dem Vergessen gerettete armenische Märchen”, 2023)*:*

Ս. Վարդանյանի հանրահայտ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գիրքը սկզբնապես, որպես հոդվածաշար, 1983 թ. տպագրվել է «Պիոներ» ամսագրում դառնալով հայ աշակերտների համար հայրենագիտության անփոխարինելի աղբյուր: Այս հետաքրքրաշարժ գիրքը, նոր նյութերով համալրված, «Հայաստանի մայրաքաղաքները» վերնագրով վերահրատարակվել է 1995 թվականին: Դա, իրավամբ, գիտական և գրքային նոր մշակույթ էր:

Հետագա տարիներին Ս. Վարդանյանն աշխատել է Հայ ճարտարապետության թանգարան-ինստիտուտում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, 1991–2002 թթ. եղել է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահը:

Ս. Վարդանյանի մասնագիտական ուղին նախանշվել է իր պատանեկության հիշարժան մի դրվագով: 1969 թ. ամռանը 16-ամյա Սերգեյը, Սև ծովի առափնյա Ադլեր քաղաքում ամառային հանգիստն անցկացնելու ժամանակ, ակամտես է դառնում մոտակա Մոլդովկա գյուղում հայկական դպրոց բացելու ստորագրահավաքի և խորապես դառնանում է Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների ծանր վիճակից: Վերադառնալով Հայաստան՝ նա չի կարողանում մոռանալ այդ պատկերը: Եվ ահա, նրա անմնացորդ նվիրումը հայությունը վկա եղավ հատկապես 1970-ականներից, երբ սկսել է զբաղվել անծայրածիր տարածք և 11 ժամային գոտի ունեցող ԽՍՀՄ-ում սփռված հայերի խնդիրներով: Հենց այդ ընթացքում էլ Ս. Վարդանյանը բացահայտել է համշենահայերին, որոնք դարձել են նրա գիտական պրպտումների հիմնական առանցքը: Բազում գրկանքների գնով՝ բազմիցս գործուղման է մեկնել թե՛ խորհրդային տարբեր հանրապետություններ, թե՛ Արևմտյան Հայաստան (ժամանակակից Թուրքիա)՝ հաճախ առերեսվելով կյանքին սպառնացող ստույգ վտանգների:

1979 թ. «Գրքերի աշխարհ» ամսաթերթում տպագրվել է Ս. Վարդանյանի «Համշենցիների ձայնը» հոդվածը, որում նա անդրադարձել է 1971 թ. Սերո Խանզադյանի կազմած «Ձայն համշենական» ժողովածուի առաջին գրքին և Ադլերում բնակվող երկարամյա մանկավարժ, գրող ու բանահավաք Անդրանիկ Զեյթունյանի 1979 թ. կազմած երկրորդ գրքին: Դա ապագա համշենագետի առաջին հոդվածն էր Համշենի ու համշենահայերի մասին: Մեկ տարի անց նույն թեմայով մեկ այլ գրախոսական է տպագրել «Գարուն» ամսագրում: Արդեն 1982 թ., դարձյալ «Գարուն»-ում, տպագրվել է «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» ուղեգրությունը, որում Ս. Վարդանյանը պատմում է 1981 թ. Մոլդովկայի դպրոցի հայկական բաժին այցելության, առհասարակ Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի համշենահայերի գյուղերում շրջագայության, հայկական դպրոցների փակման մասին: Այդ հոդվածը մեծ արձագանք ունեցավ,

որի շնորհիվ հաջողվեց Հայաստանի մանկավարժական բուհերում տարեկան 32 արտամրցութային տեղի հատկացման որոշում կորզել Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի, Ռոստովի մարզի և Աբխազիայի հայ շրջանավարտների համար: Այսօր Աբխազիայի հայկական դպրոցների ուսուցիչներից շատերն այս նախաձեռնության շնորհիվ Հայաստանում ուսում ստացածներն են:

Ս. Վարդանյանի գիտական կյանքում բեկումնային է եղել 1981 թվականը, երբ նա մեկնել է Ռուսաստան՝ Կրասնոդարի երկրամասի համշենցիների գյուղերն ուսումնասիրելու, որտեղ իրեն հայտնել են, թե Ղազախստանից ու Ղրղզստանից եկած ինչ-որ մարդիկ կան, որոնք, խոսում են համշենցիների պես: Նա միանգամից գլխի է ընկել, որ Կենտրոնական Ասիայի բնակիչների նման հագնված այդ մարդիկ պետք է որ 1944 թ. Աջարիայից բռնի տեղահանված համշենահայերը լինեն, որոնց ինքը մի քանի տարի փնտրում էր՝ ջանալով փաստագրել և՛ բռնի տեղահանությունը, և՛, առաջին հերթին, բանահյուսական նյութեր հավաքել: Բայց, ժամանակի սղության պատճառով, նա չի հասցրել խորամուխ լինել մանրամասների մեջ և վերադարձել է Երևան:

Մոտ երեք տարի անց՝ 1984 թ. ապրիլին, տեղեկանալով, որ Կրասնոդարի երկրամասում վերաբնակված համշենահայերից ոմանք եկել են Ղրղզստանի Օշի մարզի Կրզրլ-Կրյա քաղաքից, մեկնել է նախ Ղրղզստան, ապա՝ Ղազախստան: Այդ ուղևորության ընթացքում Ս. Վարդանյանին հաջողվել է գրառել համշենցիների բանարվեստի՝ զգալի քանակի նմուշներ և փաստագրել նրանց բռնագաղթը: Ղազախստանում, Ղրղզստանում և Ուզբեկստանում Ս. Վարդանյանը եղել է նաև 1987 թ.: Այդ շրջագայությունների ընթացքում Ղազախստանում գրառված «Արդէլէցիք՝ ավջի» երգիծական մանրավեպին ու դրա փոփոխակներին է նվիրված «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրությունը (Երևան, 2022, 352 էջ), որը, ի շարս այլ յուրահատկությունների, առանձնանում է մուսուլման և քրիստոնյա հայերի բանահյուսությունն առաջին անգամ համապարփակ քննության ենթարկելու առումով:

Թեև Ս. Վարդանյանն արմատներով Վանից էր, սակայն հիմնադրման օրվանից՝ 1992 թ., եղել է Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ նախագահի տեղակալ, իսկ 2004–2018 թթ. հասարակական հիմունքներով աշխատել է որպես նույն ՀԿ «Ձայն համշենական» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր: 13–14 տարի, Ս. Վարդանյանը միայնակ հրատարակել է այդ թերթը, որի յուրաքանչյուր համարի հազար օրինակ տպաքանակն անվճար բաժանել է Հայաստանի և Սփյուռքի ընթերցողներին, ուղարկել Ռուսաստանի, Աբխազիայի ու Թուրքիայի համշենցիներին: Միայն բացառիկ կամքի տեր մարդը, իր գործի մոլեռանդ նվիրյալը կարող է տարիներ շարունակ իր տան մի սենյակը տպարան-խմբագրատուն դարձնել հանուն գաղափարի:

Հարազատ ինստիտուտում՝ գործընկերների հետ զրույցների ժամանակ, Ս. Վարդանյանը վերջին մեկ-երկու տարիների ընթացքում անընդհատ խոսում էր իր կյանքի մատենագիտության մասին՝ այն համարելով իր «կարապի երգը», և շատ անհանգիստ էր՝ «չլինի, թե չհասցնեմ»: Հասցրեց, բայց դրանից հետո, երբ առողջությունն ամբողջովին քայքայված էր, իսկ գիտակցությունը հաճախ մթագնում էր, նա, այնուամենայնիվ, չկարողացավ հանդարտ ու հանգիստ ապրել իր կյանքի վերջին ամիսները և գրեց ու լույս ընծայեց 1944 թ. Աջարիայի

սահմանամերձ գյուղերից այլազգիների հետ Ղազախստան և Ղրղզստան աքսորված կրոնափոխ համշենահայերի մասին պատմող «Աքսորված համշենահայերի հետքերով» (Երևան, 2025, 432 էջ) ուշագրավ աշխատությունը, որը, ցավոք, այս անգամ իրապես դարձավ նրա «կարապի երգը» ... Ընդամենը մոտ մեկ ամիս անց՝ 2025 թ. մայիսի 30-ին, դադարեց բաբախել մեծ համշենագետի սիրտը:

Ս. Վարդանյան բանասերի, պատմաբանի, բանահավաքի, բանագետ-բարբառագետի, արձակագրի, հրապարակախոսի կեղարյա գիտական ուղին՝ գրքեր, հոդվածներ և այլ հրապարակումներ, ամփոփված է իր իսկ կազմած և 2025 թ. լույս տեսած «Ընդարձակ մատենագիտություն (1974–2024)» աշխատության մեջ (Երևան, 2025, 380 էջ): Հանրագիտարանային ոճով գրված այս աշխատանքը եզակի արժեք ունի բանասերների, պատմաբանների, ազգագրագետների, մշակութաբանների, սփյուռքագետների և, հատկապես, ցեղասպանագետների, քրիստոնյա և կրոնափոխ համշենահայերի պատմությամբ հետաքրքրվողների համար:

Հայագիտությանը, հայ մշակույթին մատուցած բացառիկ ծառայություններ համար Ս. Վարդանյանն արժանացել է բազմաթիվ մրցանակների ու պարգևների՝ «Գրքերի աշխարհ» ամսաթերթում «Հուհա» հումորի մրցույթի կրկնակի դափնեկիր (1974 և 1975), «Հրապարակախոսական հոդվածի և ակնարկի համար» Հայաստանի ժուռնալիստների միության տարվա մրցանակ (1980), Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի կողմից շնորհված Արծաթե հուշամեդալ (Վատիկան, 1992), «Հայաստանի մայրաքաղաքները» գրքի համար՝ Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուղունյան» մրցանակ (1997), Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի՝ Հայաստան կատարած ուխտագնացությանը նվիրված հուշամեդալ (2001), Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանի ժուռնալիստների միության բարձրագույն մրցանակ՝ որպես խմբագիր (2009), Ռուսաստանի հայերի միության հիմնադրման 10-ամյակին նվիրված մեդալ (2010), Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն միջազգային հիմնադրամի «Ֆրիտյոֆ Նանսեն» Ոսկե հուշամեդալ (2012), ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալ (2012), ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալ (2012), Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալ (2012), Հովհաննես Թումանյանի թանգարանի մրցանակ և մեդալ (2013), Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալ (2015):

Ս. Վարդանյանի անցած գիտական ճանապարհը պարզապես հետազոտողի ուղի չէր. դա հայ մարդու անմար հիշողության, հավաքական ցավի և գոյապայքարի արձանագրումն էր գիտության լեզվով: Նրա գործը հատեց առարկայական հետազոտության սահմանները՝ վերածվելով հոգևոր ու ազգային պարտքի մարմնավորման: Որպես բանագետ և ազգագրագետ՝ նա ապրեց այն գիտակցումով, որ գիտնականը պատմությունն ու մշակույթը ոչ միայն վերլուծելու, այլև այն փրկելու առաքելություն ունի:

Սերգեյ Գագիկի Վարդանյանի անունը մշտապես վառ կմնա իր բոլոր գործընկերների սրտերում՝ որպես նվիրյալ և անկոտրում գիտնականի օրինակ: Նրա կյանքի պատմությունը ոգեշնչման և պատասխանատվության աղբյուր կդառ-

նա հայագիտության ոլորտում առաջին քայլերն անող երիտասարդների համար: Որքան տարիները գլորվեն, այնքան ավելի է արժևորվելու նրա գործը, այնքան ավելի է ընդգծվելու ու երևան գալու նրա մեծությունը, որը ողջության օրոք երբեմն, ցավոք, չէր նկատվում ... առաջին հերթին հենց իր չափազանց համեստության պատճառով: Նրա կենսագրությունն ապացույց է, որ գիտությունը կարող է լինել ոչ միայն մասնագիտական ընտրություն, այլև ամբողջական ապրած կյանք՝ ազգային հիշողության պահապանի առաքելությամբ:

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ,
ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ